

## Իրավական ակտեր

Չափոց 1.(07.3540) Վարչական վարույթի հարուցման հիմքերն են

1. անձի դիմումը, բողոքը կամ վարչական մարմնի նախաձեռնությունը
2. անձի դիմումը կամ բողոքը
3. անձի բողոքը կամ վարչական մարմնի նախաձեռնությունը

(1)

Չափոց 2.(07.3541) Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է

1. վարչական մարմինը անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում
2. անձը՝ նրա համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում
3. անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում

(3)

Չափոց 3.(07.3542) Դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո՝

1. եռօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթի հարուցման մասին
2. մեկամսյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթի հարուցման մասին
3. հնգօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթի հարուցման մասին

(1)

Չափոց 4.(07.3543) Վարչական ակտը, որպես կանոն, ընդունվում է

1. գրավոր՝ որոշման ձևով
2. գրավոր՝ որոշման, հրամանի, կարգադրության կամ օրենքով նախատեսված այլ ձևով
3. գրավոր՝ հրամանի կամ կարգադրության ձևով

(2)

Չափոց 5.(07.3544) Գրավոր վարչական ակտն ընդունված է համարվում

1. այդ ակտը վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրվելու օրվանից
2. այդ ակտը վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրվելու հաջորդ օրվանից
3. այդ ակտը վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրվելուց հինգ օր հետո

(1)

Չափոց 6.(07.3545) Վարչական վարույթը բաղկացած է

1. միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման և եզրափակիչ փուլերից
2. միմյանց փոխկապակցված՝ նախնական, ընթացիկ և եզրափակիչ փուլերից
3. միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից

(3)

Չափոց 7.(07.3546) Վարչական վարույթում վարույթի մասնակիցները կարող են մասնակցել

1. ինքնուրույն
2. ինքնուրույն, իրենց ներկայացուցիչների միջոցով կամ նրանց հետ միասին

3. միայն իրենց ներկայացուցիչների միջոցով

(2)

Ֆաթեց 8.(07.3547) Եթե դիմումը ներկայացվել է ոչ իրավասու վարչական մարմին, ապա դիմումն ստացած վարչական մարմինը

1. եռօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին
2. եռօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին
3. հնգօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին

(1)

Ֆաթեց 9.(07.3548) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով վարչական ակտի տեսակներ են՝

1. բարենպաստ, միջամտող և զուգորդվող վարչական ակտերը
2. բարենպաստ և ոչ բարենպաստ վարչական ակտերը
3. բարենպաստ, ոչ բարենպաստ և միջամտող վարչական ակտերը

(1)

Ֆաթեց 10.(07.3549) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով զուգորդվող վարչական ակտն այն վարչական ակտն է

1. որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց դրությունը բարելավող ցանկացած այլ պայման
2. որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը
3. որն իր մեջ պարունակում է անձի համար ինչպիսիք բարենպաստ, այնպես էլ միջամտող վարչական ակտերով սահմանվող դրույթներ

(3)

Ֆաթեց 11.(07.3550) Վարչական վարույթի առավելագույն ժամկետը

1. 15 օր է
2. 30 օր է
3. 10 օր է

(2)

Ֆաթեց 12.(07.3551) Դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի ժամկետն սկսվում է

1. դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից
2. դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու հաջորդ օրվանից
3. դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու երրորդ օրվանից

(1)

Ֆաթեց 13.(07.3552) Գրավոր վարչական ակտը, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին ակտի ընդունումից հետո

1. եռօրյա ժամկետում
2. մեկամսյա ժամկետում
3. հնգօրյա ժամկետում

(1)

Չափոց 14.(07.3553) Վարչական մարմինն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է գործել այնպես, որպեսզի առանց իր լիազորությունների կատարմանը վնասելու՝ առավել սեղմ ժամկետում, առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար ապահովի

1. իր տիրապետմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը
2. իր տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը
3. իր օգտագործմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը

(2)

Չափոց 15.(07.3554) Անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում վարչական վարույթը կարող է սահմանափակվել

1. միայն նախնական փուլով
2. նախնական և եզրափակիչ փուլերով
3. միայն եզրափակիչ փուլով

(3)

Չափոց 16.(07.3555) Իրավական ակտերն իրենց բնույթով լինում են

1. նորմատիվ կամ անհատական (ոչ նորմատիվ)
2. նորմատիվ, անհատական (ոչ նորմատիվ) կամ ներքին (լոկալ)
3. նորմատիվ կամ ներքին (լոկալ)

(2)

Չափոց 17.(07.3556) Ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը սահմանվում են

1. բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով
2. բացառապես Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումներով
3. բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով

(1)

Չափոց 18.(07.3557) Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը գործում են

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերի ենթակայության սկզբունքի հիման վրա
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերի գերակայության սկզբունքի հիման վրա
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ առավել ցածր իրավաբանական ուժ ունեցող ակտերի գերակայության սկզբունքի հիման վրա

(2)

Հայրց 19.(07.3558) Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները

1. պետք է համապատասխանեն օրենսգրքերին
2. կարող են համապատասխանել օրենսգրքերին
3. պետք է համապատասխանեն ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտերին

(1)

Հայրց 20.(07.3559) Նույն իրավական ակտի ընդհանուր և հատուկ մասերի միջև հակասության դեպքում գործում են

1. ընդհանուր և հատուկ մասերի դրույթները
2. հատուկ մասի դրույթները
3. ընդհանուր մասի դրույթները

(3)

Հայրց 21.(07.3560) Հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում

1. պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը
2. իրավունք ունեն կիրառել ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը
3. պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց դրությունը վատթարացնող նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը

(1)

Հայրց 22.(07.3561) Հայաստանի Հանրապետության օրենքներն ու իրավական այլ ակտերը պետք է համապատասխանեն՝

1. միջազգային իրավունքի համընդհանուր նորմերին
2. միջազգային իրավունքի համընդհանուր նորմերին ու սկզբունքներին
3. միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին

(2)

Հայրց 23.(07.3562) Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար

1. բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը
2. բավական է թվարկված պայմաններից առնվազն երկուսի առկայությունը
3. անհրաժեշտ են բոլոր պայմանների առկայությունը

(1)

Հայրց 24.(07.3563) Նորմատիվ իրավական այն ակտը, որում ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսված չէ, ուժի մեջ է մտնում

1. դրա պաշտոնական հրապարակման օրվան նախորդող օրը
2. դրա պաշտոնական հրապարակման օրվանից
3. դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

(3)

Չափոց 25.(07.3564) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության օրենքներն ստորագրում և հրապարակում է

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը
2. Հայաստանի Հանրապետության Նախագահը
3. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը

(2)

### **Հանապատասխան պետ.մարմնի իրավ. կանոնակարգող. իրավ.ակտեր**

Չափոց 1.(05.2125) Հայաստանի Հանրապետության նախարարությունը

1. գործադիր իշխանության հանրապետական մարմին է
2. տեղական ինքնակառավարման մարմին է
3. ազգային ժողովի ենթակառուցվածք է

(1)

Չափոց 2.(05.2126) ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է

1. Հայաստանի Հանրապետությունը
2. ՀՀ արդարադատության նախարարը
3. ՀՀ կառավարությունը

(1)

Չափոց 3.(05.2127) Նախարարությունն ստեղծվում, վերակազմակերպվում է և նրա գործունեությունը դադարեցվում է

1. ՀՀ կառավարության որոշմամբ
2. ՀՀ նախագահի հրամանագրով
3. ՀՀ ազգային ժողովի նախագահի որոշմամբ
4. ՀՀ նախարարի հրամանով

(2)

Չափոց 4.(05.2128) Նախարարությունն ունի

1. կլոր կնիք, ձեւաթղթեր, խորհրդանիշ
2. հայերեն եւ անգլերեն անվանմամբ կլոր կնիք, ձեւաթղթեր, խորհրդանիշ եւ անհատակակացման այլ միջոցներ
3. ՀՀ զինանշանի պատկերով եւ նախարարության հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձեւաթղթեր, խորհրդանիշ եւ անհատակակացման այլ միջոցներ
4. հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձեւաթղթեր

(3)

Չափոց 5.(05.2129) Նախարարությունը ղեկավարում է

1. նախարարը եւ նրա տեղակալները
2. նախարարը եւ վարչության պետը
3. նախարարը

4. նախարարը եւ աշխատակազմի ղեկավարը

(3)

Չափոց 6.(05.2130) Նախարարին պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է

1. ՀՀ վարչապետը՝ ՀՀ նախագահի առաջարկությամբ
2. ՀՀ նախագահը՝ ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ
3. ՀՀ վարչապետը
4. ՀՀ նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ

(4)

Չափոց 7.(05.2131) Փոխնախարարներին պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է

1. ՀՀ նախագահը՝ խորհրդակցելով նախարարի հետ
2. Նախարարը՝ խորհրդակցելով ՀՀ վարչապետի հետ
3. ՀՀ վարչապետը՝ խորհրդակցելով նախարարի հետ
4. Նախարարը

(3)

Չափոց 8.(05.2132) Նախարարը հաշվետու է՝

1. ՀՀ նախագահին, ՀՀ ազգային ժողովի նախագահին
2. ՀՀ նախագահին, ՀՀ կառավարությանը եւ ՀՀ վարչապետին
3. ՀՀ վարչապետին
4. ՀՀ նախագահին

(2)

Չափոց 9.(05.2133) Նախարարի խորհրդականներին, մամուլի քարտուղարին եւ օգնականներին պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է՝

1. նախարարը
2. աշխատակազմի ղեկավարը
3. նախարարի տեղակալը
4. կադրերի եւ հատուկ աշխատանքների վարչության պետը

(1)

Չափոց 10.(05.2134) Նախարարության աշխատողների թիվը հաստատում է՝

1. նախարարը՝ տեղակալների ներկայացմամբ
2. նախարարը
3. ՀՀ վարչապետը՝ նախարարի ներկայացմամբ
4. նախարարը՝ աշխատակազմի ղեկավարի ներկայացմամբ

(3)

Չափոց 11.(05.2140) Նախարարի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է՝

1. Աշխատակազմի ղեկավարը
2. նախարարի տեղակալներից մեկը՝ նախարարի հանձնարարությամբ
3. Գլխավոր վարչության պետերից մեկը

(2)

Չափոց 12.(05.2326) Նախարարության աշխատակազմը

1. իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է
2. իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կառավարչական հիմնարկ է
3. նախարարության գործունեությունը կանոնակարգող հիմնարկ է

(1)

Ֆայրց 13.(05.2327) Նախարարության աշխատակազմի կառուցվածքում ներառվում են

1. նրա կառուցվածքային հիմնարկները եւ ոչ առետրային կազմակերպությունները
2. նրա կառուցվածքային ստորաբաժանումները (վարչություններ, բաժիններ, քարտուղարություն) եւ առանձնացված ստորաբաժանումները (գործակալություններ, տեսչություններ)
3. պետական փակ բաժնետիրական ընկերությունները եւ տեսչությունները

(2)

Ֆայրց 14.(05.2328) Նախարարության աշխատակազմը ղեկավարում է

1. նախարարության աշխատակազմի ղեկավարը
2. նախարարը
3. նախարարի առաջին տեղակալը

(1)

Ֆայրց 15.(05.2329) Նախարարության աշխատակազմը

1. չունի ինքնուրույն հաշվեկշիռ
2. ինքնուրույն հաշվեկշիռ ունենալու իրավունք չունի
3. ունի ինքնուրույն հաշվեկշիռ

(3)

Ֆայրց 16.(05.2370) Նախարարությունը իր գործունեությունն իրականացնում է

1. ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան
2. ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան
3. ՀՀ վարչապետի հանձնարարականներին համապատասխան

(2)

Ֆայրց 17.(05.2371) ՀՀ արդարադատության նախարարն իր իրավասության սահմաններում ընդունում է

1. գերատեսչական ակտեր
2. օրենքներ
3. նորմատիվ ակտեր

(1)

Ֆայրց 18.(05.2378) ՀՀ արդարադատության նախարարին պաշտոնի նշանակում է եւ ազատում է

1. ՀՀ նախագահը ՀՀ վարչապետի առաջարկությամբ
2. ՀՀ վարչապետը
3. ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար- նախարարը

(1)

Ֆայրց 19.(05.2379) ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի կառավարումը իրականացնում է

1. ՀՀ արդարադատության նախարարի տեղակալները
2. ՀՀ կառավարությունը ու նախարարը՝ օրենքով եւ նախարարության կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում

3. ՀՀ արդարադատության նախարարի օգնականը

(2)

Հայրց 20.(05.2380) ՀՀ արդարադատության նախարարի տեղակալներին պաշտոնի նշանակում եւ ազատում է

1. ՀՀ արդարադատության նախարարը
2. ՀՀ նախագահը խորհրդակցելով վարչապետի հետ
3. ՀՀ վարչապետը խորհրդակցելով նախարարի հետ

(3)

Հայրց 21.(05.2381) Արդարադատության նախարարությունը կառավարում է

1. ՀՀ կառավարությունը
2. ՀՀ արդարադատության նախարարը
3. ՀՀ արդարադատության աշխատակազմի ղեկավարը

(2)

Հայրց 22.(05.2622) Քրեակատարողական հիմնարկի պետի լիազորություններից մեկն է

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հանձնարարությամբ անցկացնում է ծառայողական քննություններ
2. միջնորդություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին ծառայողական քննություն նշանակելու համար
3. իր իրավասության սահմաններում խրախուսանքի կամ կարգապահական տույժի է ենթարկում քրեակատարողական ծառայողներին եւ վարձու աշխատողներին
4. զեկուցագրեր է ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ քրեակատարողական ծառայության գործունեության ընթացքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ

(3)

Հայրց 23.(05.2623) Քրեակատարողական հիմնարկի պետի լիազորություններից մեկն է

1. ընդունում է քրեակատարողական ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ, տալիս ցուցումներ
2. համակարգում է քրեակատարողական հիմնարկի քրեակատարողական ծառայողների եւ վարձու աշխատողների աշխատանքները
3. առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ ծառայության կառուցվածքի, իր տեղակալների միջեւ պարտականությունների բաշխման, անձանց քրեակատարողական ծառայության պաշտոններում նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ

(2)

Հայրց 24.(05.2624) Քրեակատարողական ծառայողն իրավունք չունի

1. լինել որեւէ կուսակցության, կրոնական կազմակերպության անդամ
2. կազմակերպել միջոցառումներ դատապարտյալների շրջանում
3. լինել հասարակական կազմակերպության անդամ

(1)

Հայրց 25.(05.2866) ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը

1. իրեն հանձնարարված բնագավառում համակարգում է նախարարության համակարգի աշխատանքները
2. իրեն հանձնարարված բնագավառում ընդունում է նորմատիվ ակտեր



3. իրեն հանձնարարված բնագավառում ընդունում է գերատեսչական ակտեր

(1)

Չափոց 26.(05.2867) Նախարարության աշխատակազմը

1. կարող է դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող
2. կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն
3. չի կարող դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող

(1)

Չափոց 27.(05.2868) Նախարարության աշխատակազմը

1. չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն
2. չի կարող է դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող
3. կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն

(1)

Չափոց 28.(05.2869) ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի անվանումն է

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կառուցվածքային վարչություն
2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն
3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ

(3)

Չափոց 29.(05.2870) ՀՀ կառավարությունը

1. իրավունք ունի ցանկացած ժամանակ վերցնել նախարարության աշխատակազմի գույքը
2. իրավունք չունի ցանկացած ժամանակ վերցնել նախարարության աշխատակազմի գույքը
3. չի կարող դադարեցնել նախարարության գործունեությունը

(1)

Չափոց 30.(05.2871) ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմն իրավունք ունի իր գույքը

1. տնօրինել եւ տիրապետել
2. տիրապետել, տնօրինել եւ օգտագործել
3. օգտագործել և տնօրինել

(2)

Չափոց 31.(05.2872) ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է

1. կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը
2. ՀՀ արդարադատության նախարարը
3. ՀՀ կառավարությունը

(2)

Չափոց 32.(05.2873) ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է

1. ՀՀ կառավարությունը
2. առանձնացված ստորաբաժանման ղեկավարը
3. ՀՀ արդարադատության նախարարը

Ֆաթեց 33.(05.2874) ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումը հանդես է գալիս

1. ՀՀ արդարադատության նախարարության անունից
2. ՀՀ կառավարության անունից
3. Հայաստանի Հանրապետության անունից

(3)

Ֆաթեց 34.(05.2875) ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումը

1. չի կարող դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող
2. կարող է դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող
3. կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն

(2)

#### **ՔԿ ոլորտը կանոնակարգող իրավական ակտեր**

Ֆաթեց 1.(02.2174) Քանի կգ հանձնուք եւ ծանրոց կարող է ստանալ կալանավորը ամսական

1. մինչեւ 100 կգ
2. մինչեւ 70կգ
3. 70 կգ
4. մինչև 40 կգ

(2)

#### **Քրեաիրավ. և քրեադատ. ոլորտը կանոնակարգող իրավ. ակտեր**

Ֆաթեց 2.(03.2178) Ըստ բնույթի եւ հանրության համար վտանգավորության աստիճանի հանցագործությունները դասակարգվում են

1. Ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների
2. Թեթեւ, միջին եւ ծանր հանցագործությունների
3. Ոչ մեծ ծանրության եւ առանձնապես ծանր հանցագործությունների
4. Ոչ մեծ ծանրության, միջին ծանրության եւ ծանր հանցագործությունների

(1)

#### **ՔԿ ոլորտը կանոնակարգող իրավական ակտեր**

Ֆաթեց 3.(02.2183) Կալանավորված անձինք իրավունք չունեն

1. Իրենց իրավունքներին իրազեկ լինելու
2. Առողջության պահպանման
3. Ներքին կանոնակարգի պահանջները խախտելու
4. Ընտրելու

(3)

Ֆաթեց 4.(02.2184) Քրեակատարողական ծառայությունը

1. Պետական ծառայություն է

2. Քաղաքցիական ծառայության տեսակ է
3. Պետական ծառայության հատուկ տեսակ է
4. Ռազմական ծառայության տեսակ է

(3)

Հարց 5.(02.2185) Քրեակատարողական հիմնարկներ են

1. ուղղիչ աշխատանքային գաղութները եւ մեկուսարանները
2. ուղղիչ հիմնարկները եւ կալանավորվածներին պահելու վայրերը
3. կալանավորվածներին եւ ձերբակալվածներին պահելու վայրերը
4. ազատազրկման վայրերը

(2)

Հարց 6.(02.2186) Քրեակատարողական ծառայողը

1. պետական ծառայող է
2. հանրային ծառայող է
3. քաղաքացիական ծառայող է

(1)

Հարց 7.(02.2135) Քրեակատարողական հիմնարկները ստեղծում, վերակազմակերպում եւ դրանց գործունեությունը դադարեցնում է

1. ՀՀ արդարադատության նախարարը
2. ՀՀ արդարադատության նախարարը՝ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ղեկավարի ներկայացմամբ
3. ՀՀ կառավարությունը
4. Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ղեկավարը

(3)

Հարց 8.(02.2138) Ձերբակալվածներին պահելու վայրում անձին պահելու հիմքը

1. Ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի վճիռն է
2. ձերբակալման մասին քրեակատարողական մարմնի վճիռն է
3. քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան կազմված ձերբակալման արձանագրությունն է կամ ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումն է

(3)

Հարց 9.(02.2139) Կալանավորվածներին պահելու վայրում անձին պահելու հիմքը

1. Կալանավորման մասին քրեական հետապնդման մարմնի վճիռն է
2. Ձերբակալման մասին քրեակատարողական մարմնի վճիռն է
3. քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան կայացված դատարանի որոշումն է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին

(3)

Հարց 10.(02.2166) Կալանավորված անձանց տեսակցությունը մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների եւ այլ անձանց հետ կարող է արգելվել

1. քրեակատարողական վարչության պետի որոշմամբ
2. կալանավորվածներին պահելու վայրերի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի որոշմամբ

3. քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ
4. հիմնարկի պետի որոշմամբ

(3)

Չափոց 11.(02.2167) Ազատագրված ձեռով պատիժ կրող դատապարտյալը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե

1. դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի
2. հարթել է տուժողին պատճառված վնասը
3. կրել է քրեական օրենսգրքով սահմանված ժամկետը
4. հիմնարկի վարչակազմը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի

(1)

#### **Քրեաիրավ. և քրեադատ. ոլորտը կանոնարգող իրավ. ակտեր**

Չափոց 12.(03.2168) Քրեական օրենսգրքով սահմանված պատժի տեսակ չէ

1. հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը
2. հանրային աշխատանքը
3. կարգապահական գումարտակում պահելը
4. քաղաքացուն տրված հատուկ իրավունքից զրկելը

(4)

#### **ՔԿ ոլորտը կանոնակարգող իրավական ակտեր**

Չափոց 13.(02.2169) Կալանավորված անձինք կալանավորվածներին պահելու վայրերում անջատ չեն պահվում

1. տարբեր քրեական գործով կալանավորված անձինք միմյանցից
2. տարափոխիկ հիվանդություններով տառապող անձինք մյուսներից
3. անչափահասը չափահասներից
4. տղամարդիկ կանանցից

(1)

Չափոց 14.(02.2170) Կալանավորված անձին պատժախուց տեղափոխելը կատարվում է

1. դիտորդների խմբի որոշմամբ
2. կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի որոշմամբ
3. կալանավորվածներին պահելու վայրի պետի որոշմամբ
4. կալանավորված անձի որոշմամբ

(3)

Չափոց 15.(02.2171) Կալանավորված անձանց նկատմամբ կարող է կիրառվել հետեւյալ տույժի միջոցը

1. պատժախուց տեղափոխելը մինչեւ քսան օրով
2. տեսակցության արգելում
3. հեռախոսազրույցի արգելում
4. նկատողության հայտարարում

(4)

Չափոց 16.(02.2266) Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում դատապարտյալին արգելվում է

1. ամենօրյա 1 ժամ տեւողությամբ զբոսանքը

2. անկողնային պարագաներից օգտվելը
3. տեսակցությունները
4. սնունդը

(3)

Հարց 17.(02.2412) Ուղղիչ հիմնարկների տեսակները տարանջատվում են

1. ըստ մեկուսացվածության աստիճանի
2. ըստ պատժի տեսակների
3. ըստ դատապարտյալների քանակի

(1)

Հարց 18.(02.2413) Անզգուշությամբ կատարած հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտվելու դեպքում դատապարտյալը պատիժը կրում է

1. կիսափակ ուղղիչ հիմնարկում
2. բաց ուղղիչ հիմնարկում
3. կիսաբաց ուղղիչ հիմնարկում

(2)

Հարց 19.(02.2414) Դիտավորյալ ոչ մեծ, միջին ծանրության կամ ծանր հանցագործության համար առաջին անգամ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտվելու դեպքում դատապարտյալը պատիժը կրում է

1. կիսաբաց ուղղիչ հիմնարկում
2. փակ ուղղիչ հիմնարկում
3. կիսափակ ուղղիչ հիմնարկում

(1)

Հարց 20.(02.2415) Առանձնապես ծանր հանցագործության համար տասը տարուց պակաս ժամկետով առաջին անգամ դատապարտվելու կամ ռեցիդիվի կամ վտանգավոր ռեցիդիվի դեպքում դատապարտյալը պատիժը կրում է

1. փակ ուղղիչ հիմնարկում
2. կիսաբաց ուղղիչ հիմնարկում
3. կիսափակ ուղղիչ հիմնարկում

(3)

Հարց 21.(02.2416) Առանձնապես ծանր հանցագործության համար տասը տարուց ավելի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտվելու, ինչպես նաև առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում դատապարտյալը պատիժը կրում է

1. կիսաբաց ուղղիչ հիմնարկում
2. փակ ուղղիչ հիմնարկում
3. կիսափակ ուղղիչ հիմնարկում

(2)

Հարց 22.(02.2417) Բաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալը պահվում է

1. մինչև տասնհինգ մարդու համար նախատեսված բնակելի կացարանում
2. մինչև վեց մարդու համար նախատեսված բնակելի կացարանում
3. մինչև տասը մարդու համար նախատեսված բնակելի կացարանում

(3)

Հայր 23.(02.2418) Կիսաբաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալը պահվում է

1. մինչև տասը մարդու համար նախատեսված բնակելի կացարանում
2. մինչև տասնհինգ մարդու համար նախատեսված բնակելի կացարանում
3. մինչև վեց մարդու համար նախատեսված բնակելի կացարանում

(3)

Հայր 24.(02.2419) Կիսաբաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալը կարող է տեղաշարժվել

1. առնվազն երեք ժամ տեւողությամբ ցերեկային որոշակի ժամերին՝ ուղղիչ հիմնարկի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում
2. ցերեկային ժամերին՝ ուղղիչ հիմնարկի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում
3. գիշերային ժամերին՝ ուղղիչ հիմնարկի այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում, իսկ ցերեկային ժամերին՝ ուղղիչ հիմնարկի տարածքի սահմաններում, եւ ուղղիչ հիմնարկի պետի թույլտվությամբ՝ դրանից դուրս

(2)

Հայր 25.(02.2420) Փակ ուղղիչ հիմնարկում դատապարտյալը պահվում է

1. երկու մարդու համար նախատեսված մեկուսացված խցում կամ միայնակ
2. մինչև վեց մարդու համար նախատեսված մեկուսացված խցում կամ միայնակ
3. մինչև չորս մարդու համար նախատեսված մեկուսացված խցում կամ միայնակ

(3)

Հայր 26.(02.2421) Քրեակատարողական հիմնարկների տեսակները եւ լրակազմերը սահմանում է

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ արդարադատության նախարարի ներկայացմամբ
2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը՝ քրեակատարողական հիմնարկի ղեկավարի ներկայացմամբ
3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը՝ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ղեկավարի ներկայացմամբ

(3)

Հայր 27.(02.2598) Քրեակատարողական ծառայության հիմնական խնդիրներից են

1. անձանց՝ օրենքով սահմանված հիմքերով եւ կարգով կալանքի տակ պահելը
2. Հայաստանի Հանրապետությունում հանցավորության նվազեցմանը նպաստելը
3. կրկնահանցագործների հետ սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքներ կազմակերպելը
4. կալանավորված անձանց շրջանում կրթական ծրագրեր կազմակերպելը

(1)

Հայր 28.(02.2599) Քրեակատարողական ծառայության հիմնական խնդիրներից են

1. քրեակատարողական ծառայողներին օրենքով սահմանված կարգով կարգապահական տույժերի ներկայացնելը
2. քրեակատարողական հիմնարկներում օրինականություն, ինչպես նաեւ կալանավորվածների եւ դատապարտյալների՝ իրենց իրավունքներից եւ ազատություններից օգտվելու երաշխիքներ ապահովելը
3. քրեակատարողական ծառայողներին օրենքով սահմանված կարգով խրախուսանքի ներկայացնելը

(2)

## Գործառույթային պարտականություններ

Չափ 29.(04.2602) Քրեակատարողական ծառայության միջին խմբի պաշտոնների համար սահմանվում է հետևյալ առավելագույն կոչումը

1. արդարադատության փոխգնդապետ
2. արդարադատության մայոր
3. արդարադատության կապիտան
4. արդարադատության գնդապետ

(2)

Չափ 30.(04.2605) Հետևյալ կոչումներով ծառայության ժամկետ չի սահմանվում

1. արդարադատության ենթասպա եւ արդարադատության գեներալ մայոր
2. արդարադատության ենթասպա եւ արդարադատության գնդապետ
3. արդարադատության ավագ ենթասպա եւ արդարադատության գնդապետ

(3)

#### **ՔԿ ոլորտը կանոնակարգող իրավական ակտեր**

Չափ 31.(02.2606) Քրեակատարողական ծառայողի հերթական կոչումի շնորհումը հետաձգվում է, երբ

1. քրեակատարողական ծառայողը գտնվում է հերթական արձակուրդում
2. քրեակատարողական ծառայողը գտնվում է հետժննդյան արձակուրդում
3. քրեակատարողական ծառայողն ունի կարգապահական տույժ

(3)

Չափ 32.(02.2608) Քրեակատարողական ծառայությունում, որպես քրեակատարողական ծառայող, ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով

1. չի տիրապետում հայերենին
2. չի տիրապետում ռուսերեն կամ այլ օտար լեզուների
3. իրականացնում է ոչ մանկավարժական գործունեություն

(1)

Չափ 33.(02.2609) Յուրաքանչյուր տարի ենթակա է պարտադիր ատեստավորման քրեակատարողական ծառայողների

1. առնվազն մեկ երրորդը
2. առնվազն երկու երրորդը
3. այն մասը, որը նախորդ տարի չի վերապատրաստվել
4. առնվազն կեսը

(1)

Չափ 34.(02.2610) Հերթական ատեստավորումն անցկացվում է

1. երկու տարին մեկ անգամ
2. երեք տարին մեկ անգամ
3. յուրաքանչյուր տարի
4. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի միջնորդությամբ

(2)

Չափ 35.(02.2611) Ատեստավորման ենթակա չեն

1. քրեակատարողական ծառայության գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնողները

2. քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնողները
3. տվյալ պաշտոնը երկու տարուց պակաս ժամկետով զբաղեցնող քրեակատարողական ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել
4. հաշմանդամ ճանաչված քրեակատարողական ծառայողները

(2)

Հարց 36.(02.2612) Ատեստավորման ենթակա չեն

1. տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող քրեակատարողական ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել
2. դատական կարգով անգործունակ ճանաչված քրեակատարողական ծառայողները
3. ատեստավորում անցնել չցանկացողները և գրավոր այդ մասին հայտնողները

(1)

Հարց 37.(02.2613) Ատեստավորման արդյունքում ատեստավորման հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից միայն մեկը

1. ատեստավորումը հետաձգել եւ քրեակատարողական ծառայողին ներկայացնել այլ պաշտոն
2. ատեստավորումը հետաձգել եւ քրեակատարողական ծառայողին գործուղել վերապատրաստման
3. չի համապատասխանում մասնագիտական պահանջներին

(2)

Հարց 38.(02.2614) Ատեստավորման արդյունքում ատեստավորման հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից միայն մեկը

1. թողնել նույն պաշտոնում
2. ենթարկել կարգապահական տույժի եւ կոչումն իջեցնել մեկ աստիճանով
3. ենթարկել կարգապահական տույժի
4. չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին

(4)

Հարց 39.(02.2615) Քրեակատարողական ծառայողն ատեստավորման արդյունքներին ծանոթացվում է

1. ատեստավորման անցկացման հաջորդ օրը
2. ատեստավորման անցկացման օրը
3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին ներկայացնելուց հետո՝ 7 օրվա ընթացքում
4. ատեստավորումն անբողջությամբ ավարտվելուց հետո մեկ օրվա ընթացքում

(2)

Հարց 40.(02.2616) Քրեակատարողական ծառայողն իրավունք ունի ատեստավորման հանձնաժողովին բողոքարկել ատեստավորման արդյունքները դրանց ծանոթանալու օրվանից հետևյալ ժամկետներում

1. տասներկու ժամվա ընթացքում
2. երկու օրվա ընթացքում
3. քրեակատարողական վարչության պետին այդ մասին դիմում ներկայացնելուց երեք օրվա ընթացքում
4. մեկ օրվա ընթացքում

(4)

Հարց 41.(02.2618) Քրեակատարողական ծառայողի հիմնական իրավունքներից են



1. ՀՀ արդարադատության նախարարի կողմից սահմանված հերթական ատեստավորում անցնելը
2. կալանավորվածների եւ դատապարտյալների շրջանում մարզական, կրթամշակութային եւ այլ բնույթի միջոցառումներ իրականացնելը
3. ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը

(3)

Հարց 42.(02.2619) Քրեակատարողական ծառայողի հիմնական իրավունքներից են

1. մասնագիտական եւ ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ գիտելիքներ ապահովելը
2. սահմանված կարգով եւ ժամկետներում առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննության առնելը եւ դրանց ընթացք տալը
3. կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը
4. սեփական նախաձեռնությամբ կալանավորվածների և դատապարտյալների հետ անհատական ընդունելություններ կազմակերպելը

(3)

Հարց 43.(02.2620) Քրեակատարողական ծառայողի հիմնական պարտականություններից են

1. պաշտոնի նշանակման եւ ատեստավորման արդյունքները բողոքարկելը
2. իրավական պաշտպանությունը
3. իր իրավասության սահմաններում որոշումներ ընդունելը
4. սահմանված կարգով եւ ժամկետներում առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննության առնելը և դրանց ընթացք տալը

(4)

Հարց 44.(02.2621) Քրեակատարողական ծառայողի հիմնական պարտականություններից են

1. զբաղեցրած պաշտոնում իր իրավունքները եւ պարտականությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը
2. իր անձնական գործի բոլոր նյութերին՝ իր գործունեության գնահատականներին եւ ծառայողական գործունեությանը վերաբերող այլ փաստաթղթերին ծանոթանալը եւ բացատրություններ ներկայացնելը
3. ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ եւ նյութեր ստանալը
4. մասնագիտական եւ ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ գիտելիքներ ապահովելը

(4)

Հարց 45.(02.2648) Կալանավորված անձանց թույլատրվում է իրենց հաշվին նամակագրություն վարել

